# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ս. Ռ.

*XX դարասկզբի թուրքական ջարդերից փրկված հազարավոր հայ գաղթականներ իրենց ապաստանը գտան Հայաստանի նորանկախ հանրապետությունում, որը չնայած սոցիալ-տնտեսական ծանր իրադրությանը, ստիպված էր ստանձնել մեծաքանակ անօթևանների ու որբերի կեցության պատասխանատվությունը: Անշուշտ, հնարավոր է՝ կառավարության առջև ծառացած բարդ խնդիրների լուծումը փակուղի մտներ, եթե չլինեին այն բազմաթիվ մարդասիրական կազմակերպությունները, որոնք օգնության ձեռք մեկնեցին Հայաստանի Հանրապետությանը ստեղծված սոցիալ-տնտեսական չափազանց բարդ իրավիճակում, որի դրսևորումներից մեկն էլ ահագնացող տարափոխիկ հիվանդություններն ու համաճարակներն էին: Այս համատեքստում անհրաժեշտ էր նաև կազմակերպված բուժօգնություն տրամադրել ազգաբնակչությանը: Այդ ամենից ելնելով՝ 1920 թ. սկզբին մի խումբ հասարակական գործիչների նախաձեռնությամբ[1] ստեղծվեց Հայաստանի Կարմիր խաչի ընկերությունը (այսուհետև՝ ՀԿԽԸ):*

*Հայաստանի Հանրապետության կառավարության 1920 թ. փետրվարի 17-ի նիստում հավանության արժանացավ ՀԿԽԸ կանոնադրությունը, որը, ներկայացվելով խորհրդարանի հաստատմանը[2], վավերացվեց 1920 թ. մարտի 20-ին[3]: Կանոնադրությամբ սահմանվում էին Ընկերության գործունեության հիմնական կանոնները, ինչպես նաև, այն կարգը, որով ՀԿԽԸ-ն պետք է գործեր կառավարության անմիջական հովանավորության տակ[4]:*

*ՀԿԽԸ բարձրագույն և կենտրոնական մարմինը Գլխավոր վարչությունն էր, որի նախագահ էր ընտրվել Գրիգոր Չալխուշյանը[5], որ այդ պաշտոնում էր մինչև նոյեմբեր[6], երբ նրան փոխարինեցին՝ հաշվի առնելով առողջական վիճակը[7]:*

---

*[1] Տեղեկագիր Հայաստանի Կարմիր խաչի (այսուհետև՝ Տեղեկագիր ՀԿԽ), Փարիզ, 1926, էջ 1:*

*[2] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրությունները: 1918-1920 թթ. (այսուհետև՝ ՀՀԿՆԱ), գլխավոր խմբ. և կազմ.՝ Վիրաբյան Ա., Ե., 2014, էջ 402:*

*[3] Հայաստանի Կարմիր խաչի ընկերություն (այսուհետև՝ ՀԿԽԸ), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1920, էջ 10:*

*[4] Նույն տեղում, էջ 3:*

*[5] Գրիգոր Չալխուշյան (1861-1931) - հասարակական գործիչ, պատմաբան, իրավաբան: 1919 թ. ՀՀ կառավարությունը Չալխուշյանին նշանակել է ՀՀ ներկայացուցիչ Դոնում: 1920 թ. հունվարին եկել է Հայաստան, ընտրվել Կարմիր խաչի կենտրոնական վարչության նախագահ: 1920 թ. նոյեմբերի 10-ին մեկնել է Կ. Պոլիս, այնտեղ մնացել Հայաստանի խորհրդայնացումից հետո:*

Ուշադրության է արժանի այն փաստը, որ ՀՀ կառավարության որոշմամբ (16.IV.1920), Գլխավոր վարչության անդամները ստացել են պետական պաշտոնյաների կարգավիճակ[8], ինչը խոսում է ընկերության գործունեությունը պետական մակարդակով կարևորելու մասին:

1920 թ. ապրիլին Գլխավոր վարչությունը «Մշակ» թերթում հրապարակում է ընկերության կոչը, որտեղ նշվում էր. «Շտապեք գրուելու Հայաստանի Կարմիր խաչի ընկերութեան անդամ: Դրանով դուք ծառայած կը լինեք և ուրիշ մեծ նպատակի. Դուք կթեթևացնէք աղետներից վնասուածների վիճակը, կը սրբէք նրանց արտասուքները և կը փրկէք կորստից»[9]: Սրանով կազմակերպությունը ձգտում էր մարդասիրական օգնության ազգանվեր գործում ներգրավել հասարակության այն բոլոր շերտերին, որոնք ի վիճակի էին ինչ-որ կերպ օժանդակել ծանր կացության մեջ գտնվող խմբերի առողջապահական և սոցիալական այլ խնդիրների լուծմանը:

Միջոցների աղությունից ելնելով՝ ՀԿԽԸ-ն դիմում է նաև ՀՀ կառավարությանը՝ 5 միլոն ռուբլի վարկ ստանալու խնդրանքով, սակայն որոշվում է (9.V.1920) տրամադրել 1 մլն ռուբլի[10]:

Ընկերության արդյունավետ աշխատանքի շնորհիվ նյութական օգնություն էր հավաքվում նաև արտասահմանյան հայ գաղթօջախներից[11], Կ. Պոլսի Հայկական Կարմիր խաչի ընկերությունից[12] և այլ միջոցներով:

Օգնության ուշագրավ ձև էր ՀՀ կառավարության որոշումը (2.VI.1920), համաձայն որի, երկաթուղագծի 1-ին և 2-րդ կարգի տոմսերի արժեքին 10 ռ., իսկ 3-րդ կարգի տոմսերի արժեքին 5 ռ. էր ավելացվում հօգուտ ՀԿԽԸ-ի՝ աջակցության համապատասխան ծրագրեր իրականացնելու նպատակով[13]: Նշենք նաև, որ կառավարությունը 4 մլն ռուբլու վարկ է տալիս ՀԿԽԸ-ին (6.VIII. 1920)[14]:

ՀԿԽԸ-ն ՀՀ կառավարությանն էր դիմել նաև ձիեր և պահեստ տրամադրելու խնդրանքով[15], ինչը 1920 թ. հուլիսի 7-ի նիստի որոշմամբ մասամբ բավարարվում է, և

---

[6] ՀԿԽԸ, էջ 48:

[7] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 154, ց. 1, գ. 2, թ. 2:

[8] ՀՀԿՆԱ, էջ 428:

[9] Մշակ, 18.IV.1920:

[10] ՀՀԿՆԱ, էջ 449:

[11] Տեղեկագիր ՀԿԽ, էջ 1:

[12] **Ավագյան Վ.,** Հայկական ՍՍՌ Կարմիր խաչի ընկերության պատմությունը (այսուհետև՝ ՀԿԽԸ պատմությունը), Ե., 1949, էջ 18:

[13] ՀՀԿՆԱ, էջ 477:

[14] Նույն տեղում, էջ 530:

[15] Նույն տեղում, էջ 505-506:

ՆԳ նախարարությանը հանձնարարվում է քաղաքի կենտրոնական մի վայրում բռնա-գրավել մի պահեստ ՀԿԽՀ-ի համար[16]:

Ընկերությունը նշված օժանդակությունների հաշվին հնարա-վորություն ունեցավ կյանքի կոչելու մի շարք նախաձեռնություններ. մասնավորապես՝ Քեշիշքենդում (Դարալագյազի գավառ, այժմ՝ Եղեգնաձոր) հիմնվում է հիվանդանոց՝ 20-25 մահճակալով, իսկ Նորաշենում բուժկայան և սննդակայան[17]:

Նախատեսվում էր նաև Քեշիշքենդի հիվանդանոցի մահճակալների թիվը հասցնել 50-ի, իսկ Երևանում բացել նոր հիվանդանոց՝50 մահճակալով[18]:

Հատկանշական է այն փաստը, որ ՀԿԽՀ-ն գործուն հարաբերությունների մեջ էր նաև արտասահմանյան մարդասիրական կազմակերպությունների հետ: Նա դիմել էր Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչ դոկտոր Աշերին՝ սննդամթերք և մահճակալներ տրամադրելու խնդրանքով, բայց կոմիտեն խոստացել էր տալ միայն մահճակալներ: Դիլիջանում սննդակայան բացելու համար ևս ընկերությունը դիմել է Ամերկոմին՝ պահեստներից մթերք ստանալու խնդրանքով, սակայն աշնանը իրադրության բերումով սննդակա-յանը չբացվեց[19]:

Նշված աղբյուրների հաշվին հավաքագրված միջոցներով իրականացվող մարդասիրական աշխատանքները շարունակվում են մինչև 1920 թ. աշնանը սկսված թուրք-հայկական պատերազմը:

Պատերազմական գործողությունների ընթացքում ՀԿԽՀ-ն իր միջոցներով կազմում է բժշկական խմբեր՝ նրանց ապահովելով դեղորայքով և անհրաժեշտ սարքավորումներով, վիրավոր և հիվանդ զինվորներին բժշկական օգնություն ցույց տալու նպատակով[20]: Այդ կերպ սպառվում են ընկերության ունեցած ամբողջ միջոցները[21]:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո ըն-կերության գործունեությունը ժամանակավորապես դադարում է:

Խորհրդային իշխանության հաստատվելուց որոշ ժամանակ անց ՀԿԽՀ մի շարք անդամներ ցանկություն են հայտնում վերսկսել ընկերության գործունեությունը[22]:

1921 թ. հոկտեմբերի 15-ին Հայաստանի Ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում է, որ ՀԿԽՀ-ն պետք է վերսկսի իր գործունեությունը՝ Ժնևի 1864 թ. ընդունված կոնվենցիայի դրույթների համաձայն: Որոշման մեջ նշվում էր. «Ընկերու-

---

[16] Նույն տեղում, էջ 511:
[17] Տեղեկագիր ՀԿԽ, էջ 1:
[18] ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 2, թ. 2:
[19] Նույն տեղում, թ. 2 շրջերես:
[20] ՀԿԽՀ պատմությունը, էջ 18:
[21] Տեղեկագիր ՀԿԽ, էջ 2:
[22] Նույն տեղում, էջ 2:

թյունը, գտնվելով Առողջապահության ժողովրդական կոմիսարիատի հսկողության տակ և համաձայնեցնելով իր գործունեությունը ինչպես կոմիսարիատի, նույնպես և այն անձանց ու հիմնարկությունների գործունեության ընդհանուր ծրագրերի ու ցուցակների հետ, որոնց վրա ՀԽՍՀ կառավարությունը կդնի պարտականություն ղեկավարել բժշկա-բուժական և այլ տեսակի օգնության գործը ռազմադաշտում և ժողովրդական աղետների ժամանակ (ընկերությունը-Ա.Ս.) վայելում է լիակատար ինքնուրույնություն իր կազմակերպության և կառավարման ու հասարակական ձեռնարկություններին մասնակցելուն վերաբերող հարցերում»[23]: Համաձայն Ժող-կոմխորհի որոշման՝ պետք է վերամշակվեր ՀԿԽԸ կանոնադրությունը, ընտրվեր նոր վարչություն:

1921 թ. նոյեմբերի 20-ին ընկերության ընդհանուր ժողովի հրավիրեցին Երևանում ներկա գտնվող նախորդ վարչության անդամները[24]:

Գլխավոր վարչության նորընտիր անդամները Գլխավոր վարչության նախագահ ընտրեցին (27.XI.1921) բժիշկ Ս. Կամսարականին, փոխնախագահներ՝ բժիշկ Ն. Հակոբյանին և Գր. Եվանգուլյանին, քարտուղար՝ Ս. Տեր-Պողոսյանին, գանձապահ՝ Հ. Մելիքյանին[25]:

Նորընտիր վարչությունում, կոոպտացիայի իրավունքով, գործակցության հրավիրվեցին Խորեն արք. Մուրադբեկյանը, դոկտ. Աշերը[26], դոկտ. Էլիոթը, Հարքորտը[27], բժիշկ Գր. Մարգարյանը և բժիշկ Ա. Իսահակյանը[28]:

1922 թ. մայիսի 24-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհի կողմից ընդունվում է ՀԿԽ ընկերության նոր կանոնադրությունը, որը 1924 թ. մարտի 1-ին հաստատվում է կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից[29]:

Գլխավոր վարչությունն իրականացնում է լայնածավալ աշխատանքներ, կապեր հաստատելով արտասահմանի հայաշատ կենտրոնների, տեղերում հիմնված Հայ Կարմիր խաչի կազմակերպությունների հետ՝ դրանցից մի քանիսը վերակազմա-վորելով որպես ՀԿԽԸ մասնաճյուղեր, ինչպես՝ Ամերիկայի, Փարիզի, Մարսելի, Աթենքի և Թավրիզի մասնաճյուղերը[30]:

Գլխավոր վարչության նախագահի զեկույցում մասնավորապես նշվում է. «Մի քանի կենտրոնների համար նշանակվել են վարչության նախագահի հատուկ

---

[23] ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 2, թ. 21:
[24] Նույն տեղում, թ. 7:
[25] Նույն տեղում, թ. 7 շրջերես:
[26] Ամերկոմի ներկայացուցիչ, բժիշկ:
[27] Անգլկոմի ներկայացուցիչ:
[28] ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 30, թ. 7 շրջերես:
[29] Հայաստանի Կարմիր խաչի ընկերության կանոնադրություն, Փարիզ, 1926, էջ 9:
[30] Տեղեկագիր ՀԿԽ, էջ 3:

*ներկայացուցիչները, ինչպես Անգլիայում՝ միսս Ռոբինսոնը, Իտալիայում՝ Գորինը, Շվեյցիարիայում՝ Էլեք Բաբայանը, Թավրիզում՝ Եզ. Երզնկյանը, Ամերիկայում՝ վերջերս Հայաստանից մեկնած դոկտոր Աշերը, որոնք, հույս ունենք, մեծապես պիտի նպաստեն մեր ընկերության բարգավաճման գործին, ինչպես փաստերը գալիս են ապացուցելու: Միսս Ռոբինսոնը մեզ ուղարկել է մեծաքանակ մթերք, որը թեպետ չի ստացվել դեռևս, ընկ. Եզ. Երզնկյանը Թավրիզի Հայ Կարմիր խաչի ընկերության կողմից 200 ռ. ոսկեդրամ հանձնեց մեզ, ընկերության ներկա անհրաժեշտ կարիքներին գործադրելու համար: Առանձնակի շեշտելու է արժանի մեր սերտ հարաբերությունը Կ. Պոլսի Հայ Կարմիր խաչի կենտրոնական վարչության հետ, որը, ըստ ամենայնի, ընդառաջ է գալիս մեր բոլոր խնդրանքներին: Պոլսի Հայ Կարմիր խաչի բժշկական առաքելությունը Հայաստանում կատարած իր օգտակար գործունեությունը վերջացնելով, իր բոլոր դեղորայքը և գույքը փոխանցեց մեզ»[31]:*

*Կարմիր խաչի առաջին նվիրատուն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որը միաժամանակ հայրապետական կոնդակ է գրել Կարմիր խաչի համար, իսկ 1922 թ. երկրորդ կոնդակն է ուղարկել արտասահմանի հայությանը՝ հորդորելով աջակցել Կարմիր խաչին[32]:*

*Գլխավոր վարչության կարևոր ձեռնարկներից էր Ղամարլուի շրջանում գաղթականների համար բժշկական կայանի բացումը, որի հիմնադրման և գործարկման աշխատանքներին օժանդակելու իր պատրաստակամությունն էր հայտնել նաև Անգլիկան նպաստամատույց կոմիտեն: Կոտայքի շրջանի գաղթականների համար Շահաբ (այժմ՝ Մայակովսկի) գյուղում նախնական 6 մահճակալանոց հիվանդանոց է բացում գավառային առողջապահության բաժնի և Ամերիկյան նպաստամատույցի օժանդակությամբ[33]:*

*1922 թ. հունիսին ընդհանուր ժողովում ընտրվում են գլխավոր վարչության նոր անդամներ՝ հետևյալ կազմով. նախագահ՝ բժիշկ Ս. Կամսարական, փոխնախագահներ՝ Մ. Սահակյան, Կ. Գյուլնազարյան, քարտուղար՝ Հ. Թադևոսյան, գանձապահ՝ Գ. Ամիրյան[34]:*

*1922 թ. հունիսի 21-ին Ժողկոմխորհը ընդունում է չափազանց կարևոր որոշում[35], որով հստակ իրավական հիմքի վրա ստեղծվում է ընկերության համար ֆինանսական և նյութական բազա. դա ևս մեկ անգամ ապացուցում է ՀԿԽՀ-ի ռազմավարական կարևորությունը երկրի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի*

---

[31] ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 2, թ. 8 և շրջերես:
[32] Տեղեկագիր ՀԿԽ, էջ 3:
[33] ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 2, թ. 9 շրջերես:
[34] Նույն տեղում, գ. 30, թ. 8 շրջերես:
[35] ՀԿԽՀ պատմությունը, էջ 21:

կարգավորման գործում: Համաձայն նշված որոշման՝ Կարմիր խաչի ընկերությանն էին փոխանցվելու ընդհանուր հարկերի 5, արտասահմանյան անձնագրերի ձևակերպումից ստացված գումարների 15, զվարճանքի հաստատությունների եկամտի 2 տոկոսը և արտասահմանից ստացված նյութական միջոցները: Անհրաժեշտ միջոցների առկայության դեպքում ՀԿԽԸ-ն հնարավորություն էր ստանում ընդլայնվել և իր մասնաճյուղերը բացել հանրապետության մի շարք բնակավայրերում՝ Ալեքսանդրապոլում, Զանգեզուրում, Լոռի-Փամբակում, Դիլիջանում, Էջմիածնում, Մեղրիում, Դարալագյազում և Նոր-Բայազետում[36]:

Ալեքսանդրապոլում հիմնվում է մի մանկատուն՝ 40 որբերով, Լոռու շրջանում՝ մի բժշկական, և մի մսուր՝ Ջալալ-օղլում (այժմ՝ Ստեփանավան), Դիլիջանում և Զանգեզուրում՝ բժշկական և բուժական: Կոտայքի Քանաքեռ գյուղում բացվում է բժշկական[37], որն աշխատանքները սկսում է 1923 թ. մարտի 5-ից[38]:

Գլխավոր վարչության կարևորագույն խնդիրներից էր Միջագետքից գաղթած 6000 հայ գաղթականների առողջապահական վիճակի բարելավումը: Այդ նպատակով 1922 թ. հունիսի 25-ից Վեդի-Բասարի շրջանում, որտեղ տեղավորված էին այդ գաղթականները, բացվում է (Բոյուք-Վեդի մեծ գյուղում) բժշկա-կական՝ մեկ բժշկով և բուժակով[39]:

1922 թ. սեպտեմբերից Լոռվա մասնաճյուղը բացեց Լոռվա Գյուլագարակ գյուղում բժշկական, և նախատեսվում էր բացել նաև մսուր երեխաների համար: Ալեքսանդրապոլի ճյուղը պահում էր մի մանկատուն և մսուր՝ մոտավորապես 100 մանուկների համար[40]:

1922 թ. հոկտեմբերից Զանգեզուրի Ղարաքիլիսա (այժմ՝ Սիսիան) և Ղափանի Տեղ գյուղերում բացվում են մեկական բժշկական, իսկ 1923 թ. հունվարից բուժական է գործում նաև Հալիձորում[41]:

ՀԿԽԸ գործունեության արդյունավետությունն ապահովում էին արտասահմանյան տարբեր կազմակերպությունների և անհատների կողմից կատարվող ներդրումները՝ դրամական կամ այլ նվիրատվությունների տեսքով: Այսպես, ՀԿԽԸ գլխավոր վարչության՝ 1922 թ. դեկտեմբերի 30-ին Առժողկոմին ներկայացրած նվիրատվությունների ցանկի համաձայն, Պոլսի Հայ Կարմիր խաչի կողմից ՀՕԿ-ի միջոցով ընկերությանն է տրամադրվել 23 արկղ դեղորայք, Իզմիրի Հայ Կարմիր

[36] Նույն տեղում, էջ 21:
[37] ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 30, թ. 8-9:
[38] Նույն տեղում, գ. 38, թ. 9:
[39] Նույն տեղում, գ. 38, թ. 6 շրջերես:
[40] Նույն տեղում, գ. 38, թ. 8 շրջերես:
[41] Նույն տեղում, գ. 38, թ. 7-8:

*խաչի կողմից՝ Պոլսի Հայ Կարմիր խաչի միջոցով՝ 16 արկղ օճառ, Պոլսից՝ Ամերկոմի միջոցով փոխանցվել է 14 արկղ դեղորայք, 24 հակ նվիրատվություններով հավաքված հագուստ, 6 արկղ կոշիկ, Անգլիայից, Ռոբինսոնի կազմակերպության կողմից՝ 6 արկղ դեղորայք, Անգլիական օգնության կոմիտեի լիազոր միստր Հարքորթից՝ 7 արկղ դեղորայք և զանազան իրեր, Ամերկոմի միջոցով՝ 4 արկղ կոշիկ, ՀՕՄ-ի կողմից, ՀՕԿ-ի միջոցով՝ 5 արկղ դեղորայք, Բաթումից սպասվում էր Կ. Պոլսի Հայ Կարմիր խաչի ուղարկած 12 արկղ դեղորայքը: Դրամական նվերներ էին ստացվել Թավրիզի Հայ Կարմիր խաչի վարչությունից՝ 200ռ. և 500ռ. ոսկեդրամ[42]:*

*1923-1924 թ. մալարիայի դեմ պայքարելու նպատակով ՀԿԽԸ-ն կազմակերպեց Էջմիածնի տրոպիկական կայանը, որն ուներ նաև իր ստացիոնար 4, մեկ տարի անց՝ արդեն 6՝ հակամալարիային բժշկական խմբերը, որոնք եռանդուն աշխատանքներ էին ծավալում մոտակա Զեյվա, Խաթունարխ, Փարաքարևայլ գյուղերում:1925թ. բժշկական կետեր են բացվում Հոկտեմբերյանի կայանում, Ղափանի շրջանի Տեղ և Իջևանի շրջանի Սևքար գյուղերում[43]: 1925 թ. դրությամբ, մալարիայի դեմ պայքարելու նպատակով ընկերությունը հիմնել էր տրոպիկական հիվանդության բժշկական ստացիոնար բաժանմունք: Ընդհանուր տիպի ժամանակավոր բժշկա-կայաններ էին հիմնվել երկրի մի շարք վայրերում, իսկ ծայրագավառներում՝ մշտական և ընդհանուր տիպի բժշկակայաններ, Զանգեզուրի շրջանում՝ 2, Մեղրիի՝ 1,Դարալագյազի՝1[44]:*

*ՀԿԽԸ գործունեությունը չէր սահմանափակվում միայն առողջապահական ձեռնարկումներով, այլ դրանց զուգընթաց օգնություն էր ցուցաբերվում նաև որբ և անապաստան երեխաներին և այլ կարիքավորներին: Այսպես, Երևանում ՀԿԽԸ-ի միջոցներով բացվել էր մեկ մանկատուն, հնարավորության սահմաններում նյութական օժանդակություն էր տրամադրվում հաշմանդամներին, չքավոր բնակչությանը և գաղթականներին: Նաև կազմակերպվում է բժշկակրթական գործը՝ գթության քույրերի դասընթացները[45]:*

*«Անապաստան երեխաներին օգնող ընկերությունը» 1922-1923 թթ. նյութական աջակցություն էր ստանում Կարմիր խաչի կողմից, իսկ 1923 թ. հիմնվում է Կարմիր խաչի որբանոցը՝ 8-4 տարեկան 100 երեխաների համար[46]: 1925 թ. սեպտեմբերի 3-ի դրությամբ, ՀԿԽԸ-ի մանկատան սաների թիվը 91 էր, որոնց մեջ ընդգրկված էին 5-18 տարեկան երեխաներ[47]: ՀԽՍՀ Երևանի քաղգավգործկոմի գլխավոր ճար-*

---

[42] *Նույն տեղում, գ. 11, թ. 25:*

[43] **Դալլաքյան Մ.,** *Հայաստանի Կարմիր խաչի ընկերությունը հիսուն տարում, Ե., 1971, էջ 20-21:*

[44] *ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 78, թ. 7:*

[45] *Նույն տեղում, գ. 78, թ. 7:*

[46] *ՀԿԽԸ պատմությունը, էջ 30:*

[47] *ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 92, թ. 117 և շրջերես:*

*տարապետի՝ 1925 թ. նոյեմբերի 2-ի գրության մեջ նշվում է, որ մասնավոր մի անձի պատկանող հողամասը (26/30 սաժ. տարածությամբ), որ գտնվում էր ՀԿԽ-ին կից, հատկացվում է Կարմիր խաչին՝ մանկատան կարիքները հոգալու համար*[48]*:*

*Այսպիսով ՀԿԽԸ-ն, իր գոյության առաջին իսկ տարիներից սկսած, անգահատելի աշխատանք է կատարել՝ բազմաբնույթ օգնություն տրամադրելով Հայաստանի ազգաբնակչությանը՝ հիվանդությունները կանխարգելելու և բուժելու, անապաստան բնակչությանը, որբերին և գաղթականներին օժանդակելու գործում՝ կառավարության աջակցությամբ, տեղական և արտասահմանյան մարդասիրական այլ կազմակերպությունների հետ համագործակցելու շնորհիվ:*

## ФОРМИРОВАНИЕ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ И ЕГО ГУМАНИТАРНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ

АВЕТИСЯН С. Р.

Резюме

С 1920 г. Общество Красного Креста Армении развернуло масштабную деятельность как в Первой Армянской Республике, так и в Советской Армении по оказанию медицинской помощи населению республики, бездомным сиротам и беженцам из Западной Армении, спасшимся от геноцида.

Гуманитарная деятельность этой организации способствовала улучшению здоровья населения, повышению уровня медицинского обслуживания и социально-экономического положения населения.

## THE FORMATION OF THE ARMENIAN RED CROSS SOCIETY AND ITS HUMANITARIAN ACTIVITY

S. AVETISYAN

Abstract

The article focuses on the elucidation of the formation process of the Armenian Red Cross Society and on the implementation of the humanitarian work in the initial period. Since 1920 the Armenian Red Cross society has implemented various works for the refugees, Armenian Genocide survivors, homeless orphans and also in the procedure of health protection of the population both in the First Republic of Armenia and in the Soviet Armenia.

The activity of the Armenian Red Cross Society had a great influence on the possible improvement of the population's health and also on the social-economic situation in the country.

---

[48] *Նույն տեղում, գ. 92, թթ. 142-143:*